Արձանագրություն N 3

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/26» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

01.06.2018 թ.
ժ. 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գաբրիելյան, Ժ. Ղարդաշյան, Փ.Շահմուրադյան, Լ.Փիրոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց

I. <u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>

(Ն. Սարգսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 30.05.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սահմանված ժամկետում ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի «Տ-Ինդաստրի» ՓԲԸ-ի հայտը ներկայացվելու տարվան նախորդող տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

1.2 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետով՝ նիստը կասեցրեց և առաջարկեց «Տ-Ինդաստրի» ՓԲԸ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում (մասնակցին ծանուցելու պահից հաշված) շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

(Ն. Սարգսյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել Մասնակցի կողմից անհամապատասխանության փաստաթղթերը ներկայացնելու կամ չներկայացնելու օրվան հաջորդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ն. Սարգսյան
Անդամներ՝		Ա. Գաբրիելյան
		Ժ. Ղարդաշյան
		Փ.Շահմուրադյան
		Լ.Փիրոյան
Համակարգող՝		Վ. Մեժունց